

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2014թ.

N 334-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ  
ՎԵՐԻՆ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Վերին Ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման 2014 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմը:

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմը՝ եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ սույն Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարության  
“27 “ մայիսի 2014 թվականի  
N334 -Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**  
**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԻՆ**  
**ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ**  
**ԶԱՐԳԱՑՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ

Վերին ենթաշրջանը ընդգրկում է Աշան, Ավդուռ, Եմիշճան, Թաղավարդ, Խերխան, Ծովատեղ, Կաղարծի, Կոլխոզաշեն, Մյուրիշեն, Մամնա, Մուշկապատ, Ննգի, Շեխեր, Պառավաթումբ համայնքները, որոնց հեռավորությունը մայրաքաղաք Ստեփանակերտից տատանվում է 17-56 կիլոմետրի սահմաններում, իսկ Մարտունի շրջկենտրոնից՝ 16-45 կիլոմետրի սահմաններում:

Մարտունու շրջանի Վերին ենթաշրջանի համայնքների համաչափ զարգացումը մեծապես պայմանավորված է այդ համայնքների գյուղատնտեսության զարգացմամբ, քանի որ ներկայումս և տեսանելի հեռանկարում այս ենթաշրջանի բնակչության մեծ մասի կենսամակարդակի բարձրացման աղբյուր են լինելու այն եկամուտները, որոնք ստացվում են գյուղատնտեսական արտադրությունից և գյուղատնտեսության բնագավառում վարձու աշխատանքից՝ հաշվի առնելով ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, տեխնիկական ռեսուրսների առկայությունը:

Սույն ծրագրով ներկայացվում են այդ ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման 2014թ. իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

Վերին ենթաշրջանի համայնքների գյուղատնտեսության զարգացման ծրագիրը նպատակաուղղված է ենթաշրջանի համայնքներում հիմնական միջոցների ստեղծմանը և հետագա զարգացման համար նախադրյալների ապահովմանը:

## I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### **Նպատակը.**

Վերին ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, տեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման արդյունքում ստեղծել բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար անհրաժեշտ նախադրյալներ:

### **Խնդիրները.**

1. Վերին ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսության ճյուղերի համաչափ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

2. Առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և հողերի վիճակի բարելավման համար հնարավորությունների ստեղծում:

3. Ենթաշրջանի համայնքների բնակչության աշխատունակ հատվածի համար լիարժեք զբաղվածության ապահովում:

4. Գյուղական ենթակառուցվածքների բարելավում:

## II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Վերին ենթաշրջանում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման նպատակով 2014 թվականին անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող միջոցառումը.

**1. Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն (կորնզան, առվույտ):**

**2014թ. Մարտունու շրջանի Վերին ենթաշրջանի համայնքներում  
գյուղատնտեսության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող  
ներդրումները**

Հ/հ	Համայնքը	Նախատեսվում է ցանքս (հա)	Տրամադրվող ֆինանսական միջոցներ (դրամ)		
			Պահանջվող դիզվատելիքի գումարը	Գյուղտեխնիկայի վարձավճար և տրանսպորտային ծախսեր	Ընդամենը համայնքում
1	Աշան	30	1050000	1140000	2190000
2	Ավդուռ	10	350000	380000	730000
3	Եմիշճան	5	175000	190000	365000
4	Թաղավարդ	34	1137500	1290500	2428000
5	Խերխան	20	700000	760000	1460000
6	Ծովատեղ	9	315000	342000	657000
7	Կաղարծի	8	280000	304000	584000
8	Կոլխոզաշեն	4	140000	152000	292000
9	Մյուրիշեն	5	175000	190000	365000
10	Մամնա	14	490000	532000	1022000
11	Մուշկապատ	16	553000	609000	1162000
12	Ննզի	25	875000	950000	1825000
13	Շեխեր	22	770000	836000	1606000
14	Պառավաթումբ	18	630000	684000	1314000
<b>Ընդամենը</b>		<b>220</b>	<b>7640500</b>	<b>8359500</b>	<b>16000000</b>

Բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնումը կարևորվում է ինչպես անասունների համար կերային բազայի ապահովման, այնպես էլ ցանքատարածությունների կառուցվածքի բարելավման տեսանկյունից: Ծրագրով նախատեսվում է բազմամյա խոտաբույսերի **220.0 հա տարածքի մշակության համար** հատկացնել 16000.0 հազար ՀՀ դրամ: Նշված ֆինանսական միջոցները կտրամադրվեն բազմամյա խոտաբույսերի տակ նախատեսված **տարածքների մշակության համար` (հերկ, կրկնահերկ, կուլտիվացիա, ցանք, դիզվատելիքի ձեռք բերում, տրանսպորտային ծախսեր)** անհատույց` ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջոցով` շրջանի վարչակազմի կողմից ներկայացված համապատասխան հայտի հիման վրա, իսկ միջոցառման իրականացման համար համապատասխան քանակությամբ **սերմացուն** հողօգտագործողներին կտրամադրվի վարկի տեսքով` **արժեքի 50% սուբսիդավորմամբ:**

Վերին ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման ծրագրի իրագործման համար 2014 թվականին պահանջվող ներդրումներն ըստ եռամսյակների ներկայացված են աղյուսակում:

**ՎԵՐԻՆ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՆԵՐԿԱՅԱԳՎԱԾ ԵՆ**

/հազ. դրամ/

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2014թ.	այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1.	Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն	16 000.0			16 000.0	

**III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում սույն ծրագրի իրականացումից ակնկալվում է Վերին ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) դրական տեղաշարժեր կլինեն բուսաբուծության և անասնաբուծության ներձյուղային կառուցվածքում. կավելանան կերային մշակաբույսերի տարածքները, կաթի և մսի համախառն արտադրությունը,

2) կերային մշակաբույսերի մշակությունը դրական ազդեցություն կունենա գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացման վրա: Այն որպես ցանքաշրջանառության կարևոր օղակ կնպաստի դաշտերի մոլախոտերից մաքրմանը, հողի կառուցվածքի բարելավմանը և ազոտով հարստացմանը, կբարձրանա նրանից հետո մշակվող կուլտուրաների բերքատվությունը.

3) անասնազլխաքանակի ավելացման արդյունքում կբարձրանա բնական կերահանդակների օգտագործման մակարդակը,

4) տեղական արտադրության հաշվին կբարձրանա անասնաբուծական մթերքներով ապահովվածության մակարդակը,

5) բուսաբուծական և անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացումը կնպաստի վերամշակման ճյուղի զարգացմանը,

6) գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը, կավելանան եկամուտները:

Իրականացվող ներդրումների հաշվին կկատարվի 220 հեկտար բազմամյա կերային խոտաբույսերի ցանքս, որից հետագա տարիներին կապահովվի միջինը 1100-1300 տոննա համախառն բերք՝ տարվա կտրվածքով, 1 տոննայի միջին արժեքը կազմում է 35000 ՀՀ դրամ: Ստացված բերքը որպես կեր օգտագործումից կստացվի միջին հաշվով 57.4 տոննա միս՝ կենդանի քաշով, որի ընդհանուր արժեքը կկազմի 51660.0 հազար ՀՀ դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**